ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ՀՆԱԲԵՐԴԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРАГАЦОТН МАРЗ
ГЮХАПЕТАРАН ГНАБЕРД

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՆԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի
Հնաբերդ համայնք, գյուղ Հնաբերդ հեռ. 093-98-83-44

Գրություն N 30
07.07.2014թ.

ՀՀ Արագածոտնի մարզպետ

Պարոն՝ Ս. Սահակյանին

Ձեզ ենք ուղարկում Հնաբերդ համայնքի ավագանու 07-ը հուլիսի 2014 թ. որոշումները:
Առդիր 2 էջ:

Համայնքի ղեկավար՝ Գ. Հունանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՀՆԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Հնաբերդ համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Հնաբերդ, (093)988344 ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 հուլիսի 2014թվականի N 5

1.ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2014Թ-Ի 1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2.ԿԱՄՈՒՐՋՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ և ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՒՄԱՐԻ ՀՈԴՎԱԾԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ 3.ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ և ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հնաբերդ համայնքի ավագանու կանոնակարգ

<<ՏԻՄ>> օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ կետեր

1.2014թ 1-ին կիսամյակում կատարվել են հետևյալ աշխատանքները՝ա/Խմելու ջրի ՕԿՋ-ի մաքրում և բարեկարգում փականների փոխարինում նորերով ծախսվել է 950 000 հհ դրամ:բ/.Հաղթանակի օրվա կապակցությամբ կազմակերպվել է հանդիսավոր միջոցառում, վետերանին պարգևատրվել է դրամական և թանկարժեկ նվերով և ծախսվել 150 000 հհ դրամ:գ/Շիրակի մարզի Մեծ Մանթաշ համայնքից վարձակալվել է 170 հեկտար արոտավայր 3 տարի ժամկետով որի արժեքը կազմում է յորաքանչյուր ամիս 22 950 հհ դրամ:դ/Հուշարձան տանող ճանապարհին կառոցվել է կամուրջ ինչպես նաև վերանորոգվել է գյուղամիջյան կամուրջները և ծախսվել է 943 748 հհ դրամ:ե/Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվել է 580 000 հհ դրամ և 150 000հհ դրամ հատկացվել է հանգուցյալ Վարդիթեր Ադամյանի հուղարկավորության ծախսերի կատարման համար:զ/Վերանորոգվել է 2-րդ ջրամբարի պատնեշի քանդված հատվածը, մաքրվել է ջրթող խողովակը, ամրացվել և տարվել ախատանքներ ջրի կորուստը հասցնելու ամենա նվազագույնի, ծախսվել է 847 500 հհ դրամ:է/Համայնքի երիտասարդներին գնվել են գնդակներ իսկ տարեցներին նարդի, շախմատ և ծախսվել է 90 000 հհ դրամ:ը/Կազմակերպվել է աղբահանություն և բարեկարգման աշխատանքներ հասարակական կարգով առանց ծախսումների, բնակչությանը մշտապես մատուցվել է անվճար տարբեր ծառայություններ, փաստաթղթերի տրամադրում և այլն, մեր միջնորդությամբ բջջային կապի որակը բարձրացնելու նպատակով Վիվասել -ի կողմից կառուցվոլ է բջջային կապի կայան: թ/Հողի հարկի գանձում-կիսամյակային պլանը կազմում է 1 910 500 հհ դրամ կատարվել է 1 914 350 հհ դրամ:ի/Վարձակալական հողերի վարձավճարի գանձում կիսամյակային պլանը կազմում է 350 000 կատարվել է 352 100 հհ դրամ:լ/Ավտոգույքահարկի գանձում կիսամյակային պլանը կազմում է 700 000 հհ դրամ կատարվել է 1 244 013 հհ դրամ:խ/Տեղական տորքերի գանձում կիսամյակային պլանը կազմում է 30 000 հհ դրամ կատարվել է 14 000 հհ

դրամ:Բյուջեի մոտքրի ապահովման գործընթացը շարունակական է, մշտապես տարվում են աշխատանքներ այս ուղղությամբ:

2.-Հարգելի ավագանիներ նախորդ նիստի ժամանակ նախատեսվել էր 4651 հողվածից ծախսել 943 748 հհ դրամ կամուրջների կառուցման և վերանորոգման համար, քանի որ կամուրջների կառուցումը համարվում է որպես կապիտալ շինարարություն ուստի անհրաժեշտ է Ձեր համաձայնությունը որպեսզի կամուրջների կառուցման և վերանորոգման գումարը կատարվի ոչ թե 4651 (ընթացիկ նորոգումներ)հաշվից այլ 5113(կապիտալ նորոգումներ) հաշվից:

3.Հարգելի գործընկերներ մեր կարևորագույն խնդիրներից է եղել և մնում մեր համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին օգնելը ու աջակցելը,մեզ են դիմել բազմաթիվ քաղաքացիներ օգնություն ստանալու խնդրանքով,ուսումնասիրվել և պարզվել է որ դիմողները իրոք ունեն օգնության կարիք, այդ իսկ պատճառով անհրաժեշտ է Ձեր համաձայնությունը որպեսզի մեր համայնքի բյուջեից փոխանցվի 270 000 հհ դրամ վերոնշյալ ընտանիքներին տրամադրելու համար:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԻՍՐԱԵԼՅԱՆ ԷԴԳԱՐ

2. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ

3. ՊՈՂՈՍՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

4. ՏՈՆԱՊԵՏՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳՈՌ ՀՈՒՆԱՆՅԱՆ